ԶԳԵՍՏ

ԿԱՆԱՑԻ ԶԳԵՍՏ[1]

Զանգեզուրի կնոջ զգեստը շատ ուրույն է։ Նա նույնպես, ինչպես և տղամարդկանց զգեստը, իր էական մասերով շատ մոտ է Շամախու, Նուխու, Գանձակի, Ղարաբաղի, Ղարադաղի, Մեղրու և Ագուլիսի, այսինքն՝ հայկական բնակչության, հյուսիս-արևելյան և արևելյան գավառների կանացի զգեստին։ Այստեղ գավառական տարբերություններն ընդհանրապես շատ նշանավոր չեն։ Տարբերությունը չափազանց աչքի է զարնում, երբ համեմատում ենք այդ տարազը Հայկական լեռնաշխարհի արևմտյան հայաբնակ գավառների տարազի հետ։ Ինչպես նկատվում է արական զգեստի մեջ, այստեղ էլ բացակայում է արևմտյան ասեղնագործ նախշազարդությունը, գլխի հարդարանքի ծաղկավորությունը՝ նախշած գոգնոցը, քիթն ու բերանը մեծ մասամբ բաց և աղատ պահելը։ Իսկ զանգեզուրյան խմբի հագուստի մեջ գերիշխում են միապաղաղ գույները, գլխի հարդարանքի ծաղկավոր ասեղնագործությունից խույս տալը, քիթն ու բերանը հատուկ թաշկինակով ծածկելը։ Մինչև այսօր էլ զանգեզուրցի կանայք, մանավանդ հասակավորները, որտեղ էլ որ ապրելիս լինեն՝ մեծ դժվարությամբ են հրաժարվում իրենց ծննդավայրի տարազից և կլոխը չինում ըն այնպես, ինչպես իրենց հայրենակիցները։

Աղջկա և ամուսնացած կնոջ հագուստները տարբերվում են միայն նրանով, որ աղջկա գլուխը շինված՝ կապված չի լինում, այսինքն՝ չի ունենում բարդ հարդարանք, այլ ծածկված է պարզ թաշկինակով, յայլուխավ, որի տակից մազերը իրենց ճոխությամբ երևում են։ Հասակավոր կանայք հագնում են ավելի մուգ, իսկ երիտասարդներն ավելի բաց գույնի զգեստներ։ Աշխատանքի ժամանակ հագած սովորական՝ լիավուր շորը պարզ կարված, բավական կեղտոտած և հազար ու մի տեղից կարկատած է լինում, իսկ տոնականը՝ տոնավուրը[2], մաքուր և ավելի լավ կարված։ Աշխատանքի ժամանակ կապում են չթից կարած գոգնոց, որը պատում է նաև կուրծքը։ Գոգնոցը չի կազմում տարազի անհրաժեշտ մաս։

---

[1] Այս գլուխը մի քաղվածք է այն ընդարձակ նկարագրության, որ Պետ. Պատմ. թանգարանի նախկին գիտաշխատակից ընկ. Նազիկ Ավետիսյանը պատրաստել է որպես մի հատված «Հայկական ժողովրդական զգեստը» վերնագիր կրող հավաքական հետազոտության համար։

[2] Շատ տեղերում տոնական շորեր կոչվում են կիրակնավուր և դրսնավուր շորեր։ Որոշ տեղերում կոչվում են orզավուրի (գրբ՝. զաւր), (ծան. խմբ.)։